122 Լույսիդ առջև մեղավոր եմ,

1. Լույսիդ առջև մեղավոր եմ,
Իմ կյանք, իմ Տեր, իմ հույս, իմ սեր,
Հավատքիս մեջ դեռ անփորձ եմ,
Խաչյալ Հիսուս, օրհնիր, իմ Տեր:

2. Օգնի՛ր, որ ես շիտակ քայլեմ,
Իմ կյանք, իմ Տեր, իմ հույս, իմ սեր,
Մաքրի՛ր ժանգս, ես էլ փայլեմ,
Դու հարուցյալ Փրկիչ, իմ Տեր:

3. Բռնի՛ր ձեռքս, որ վայր չընկնեմ,
Փրկիչ Հիսուս, իմ կյանք, իմ Տեր,
Ես էլ կորած մի գառնուկ եմ,
Դու՝ իմ Հովիվ, իմ կյանք, իմ Տեր:

4. Հալածվում եմ ամեն կողմից,
Հույս ես, լույս ես, կյանք ես, իմ Տեր,
Ինձ աներեր պահիր հողմից,
Իմ կյանք, իմ Տեր, իմ հույս, իմ սեր:

5. Միայն Դու ես հարազատս,
Իմ կյանք, իմ Տեր, իմ հայր, իմ սեր,
Դու կարող ես փրկել կյանքս,
Իմ փրկարար, իմ կյանք, իմ սեր:

6. Դու լսեցիր աղերսանքս,
Իմ Փրկարար, իմ Կենարար,
Ինձ դարձրիր կորած կյանքս,
Փնտրող, գտնող իմ Փրկարար: